# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

<< 07 >> հուլիսի 2014թ. № 034/27- 509

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8 ծածկագրով
շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում Սպիտակի քաղաքապետարանի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ կնքված N ՇՀԱՊՁԲ-11/8 շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները՝ համաձայն կից ներկայացվող պայմանագրի նախագծի N1 հավելվածի:

Ընթացակարգի ծածկագիրն է՝ ՀՀ ԼՄՍՔ *-ՇՀԱՊՁԲ-14/3:*

Տեղեկացնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ք. Սպիտակ, Շահումյան 7 հասցեով, մինչև 2014թ. հուլիսի 17-ը, ժամը 12:00-ն:

Հայտերը կբացվեն Սպիտակի քաղաքապետարանի վարչական շենքում, ք. Սպիտակ, Շահումյան 7 հասցեով, 2014թ. հուլիսի 17-ին, ժամը 12:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք <<ՀՀ ԼՄՍՔ *-ՇՀԱՊՁԲ-14/3*>> պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցմամբ)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

Կատ. Ա. Ֆրանգուլյան